ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ 10-12-Ը ՎՐԱՍՏԱՆ (Ք. ԹԲԻԼԻՍԻ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը.

Արմեն Սիմոնյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

3. <u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>

2024թ. դեկտեմբերի 10-12, Վրաստան (ք. Թբիլիսի)

4. <u>Հրավիրող կողմը.</u>

ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցելու 2024թ. դեկտեմբերի 11-ին կայացած ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի Մշտական քարտուղարության հերթական նիստին:

6. Քննարկված թեմաները.

Մաքսային պահեստների կիրառման միջազգային և ՏՐԱՍԵԿԱ-ի անդամ երկրների փորձը, ավտոմոբիլային հսկիչ անցակետերի գնահատման արդյունքները, ՏՐԱՍԵԿԱ գործարար խորհրդի գործունեությունը, ՏՐԱՍԵԿԱ միջանցքի երթուղիներով բեռնափոխադրումների վիճակագրությունը և միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ՏՐԱՍԵԿԱ թույլտվությունների համակարգի արդյունքների մասին 2023թ. հաշվետվությունը, ՏՐԱՍԵԿԱ-ի պարգևների համար առաջադրված անձանց ցանկը, ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ-ի որոշ փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Նիստի ընթացքում քննարկվել են մաքսային պահեստների կիրառման միջազգային և ՏՐԱՍԵԿԱ-ի անդամ երկրների փորձին և ավտոմոբիլային հսկիչ անցակետերի գնահատման արդյունքներին, ՏՐԱՍԵԿԱ գործարար խորհրդին վերաբերող հարցեր, ինչպես նաև ՏՐԱՍԵԿԱ-ի որոշ փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողովի Մշտական քարտուղարության կողմից փոխանցվել են Հայաստանի համար միջազգային ավտոմոբիլային փոխադրումների ՏՐԱՍԵԿԱ թույլտվությունների համակարգի 2025 թվականի 100 թույլտվություններ:

Ստորագրված փաստաթղթեր առկա չեն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Հանդիպման ընթացքում ազգային քարտուղարների կողմից առաջարկվել և հաստատվել է ՏՐԱՍԵԿԱ-ի պարգևների համար ներկայացված անձանց ցանկը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

16.12.2024թ.